



AYEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտոնաւոր՝ Խ. Թ. ՍՏԲԱՆ


Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍՏԲԱՆ և Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրօնական պարբերակ

Ա. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ 1939

ԹԻՒ 11-12



Ահա Տէրը կուգայ
Ամեն, եկուր Տէր Յիսուս
Տէրը բոլը ելլէ, եւ բեճամիները ցուծեն...:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՐՈՋԻՉԸ

Մր. Հէմընտ, Ամերիկացի նշանաւոր քարոզիչը, միայն մանուկներու կը քարոզէր: Երբ առիթով մը Լոնտոն գնաց մանուկներու քարոզելու, Մր. Սփըրճըն փափաք յայտնեց որ իր եկեղեցւոյն մէջ ալ քարոզէ: Մր. Հէմընտ ըսաւ, «Գիտե՞ս ես աւելի տղայոց կը քարոզեմ, քու եկեղեցիդ շատ մեծ է, վախճում թէ եկեղեցին չլեցուի, և գիտես որ պարտապ աթոռները Սատանան և իր չար ոգիները կը գրաւեն»: «Դուն խօսք տուր քարոզելու, պատասխանեց Սփըրճըն, ես ալ պիտի աղօթեմ, որ Տէրը եկեղեցին լեցնէ մանուկներով»:

Յաջորդ կիրակին վեց հազար աթոռ պարունակող եկեղեցին, լեցուեցաւ ութ հազար մանուկներով, և երեք հազար մանուկներ ալ դուրս մնացին: Մր. Հէմընտ խօսեցաւ Հոգւով Սրբով լեցուած և մեծ զօրութեամբ, և շատ տղաք Տէրովը դարձան:

Յիսուս մանուկները շատ կը սիրէ. զանոնք առիթով մը իր գիրկը առաւ և օրհնեց զանոնք ու ըսաւ, «Երկնից թագաւորութիւնը ասանկներուն է»:

ԵԿԵՂԵՑԻՆ ՉՄԵՌՆԻՐ

«Եկեղեցին կրնայ տկարանալ, սակայն չմեռնիր, քանզի ունիկա յաւիտենական թագաւորի մը արիւնովը գնուած է, և յաւիտենական Աստուծոյ ողորմութիւնովը պիտի պսակուի»:

— Թովմաս Աստուգ

«Իր դիմաց փառաւոր պիտի կեննէ եկեղեցին» (Եփես. 527)

ՏՈՂԱՐՆԵՐ ԴՈՒՔ ԱՆ ԳԱՑԷՐ

«Երբ ըսենք մեր միսիոնարներուն, «Գացէք մինչեւ աշխարհի ծայրերը, պէտք է նսեւ ըսենք մեր առլարներուն», ով առլարներ, գացէք մինչեւ աշխարհի ծայրերը»:

ԵՐԿՈՒ ԶԱՆԳԱԿՆԵՐ

Հրէութենէ դարձած, մեծահամբաւ քրիստոնեայ հեղինակ մը իր գիրքերէն մէկուն մէջ այսպէս կը գրէ. —

Այս դարը մահամերձ՝ անկողնի մէջ է, անոր համար մահուան զանգակները կը հնչեցունին, իսկ Աստուծոյ զաւակներուն համար կը հնչեցունին ուրիշ տեսակ զանգակներ որոնք լուր կուտան թէ, «Տէրը կուգայ»:

Ո՛վ աշխարհ, արթնցի՛ր, ապաշխարէ որովհետեւ դատաստանի օրը կը մօտենայ:

Ո՛վ եկեղեցի պատրաստ կեցիւ, վեր նայի, վառնալի ահա փեսացի կուգայ:

ՀՈԳԻԻ ՄԸ ԱՐԺԷՔԸ

Հոգիներու արժէքը գնահատող Աստուծոյ մէկ ծառան կ'ըսէ. — «Եթէ Արեւը գոհար մը ըլլայ, և Լուսինը թանկագին քարի կտոր մը և աստղեր ըլլան մէյմէկ մարգրիտ, այսուամենայնիւ հոգի մը անոնց ամենէն աւելի թանկագին է»:

«Ինչ կը շահի մարդ մը՝ եթէ ամբողջ աշխարհը վստակի և իր անձը կորսնցնէ»:

Հաւաքեց՝ Կ. Յ. ԹՈՒՄԱՆԱՆ



ԱՄՍԱԹԵՐԹ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտօճուատի՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. Թ. ՌԻՄՍԵԱՆ

Ոչ - յարանուսմական և անկախ կրօնական պարբերաբեր

Ա. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ 1939

ԹԻԻ 11-12

Պատերազմական Աղօթք

«Եւ տապաւնակին չուելու տաննը Մովսէս կ'ըսէր, «Ելիր, ով տէր, ու քու թշնամիներդ թող ցրուին, ու քեզ տառդները առջեւէդ փոխչին» (Թուոց 10:35): Մովսէսին աղօթքն էր ասիկա երբ ժողովուրդին զլուխն անցած կ'առաջնորդէր զայն Աւետեաց երկիրը. թշնամիներով չըջատուած ձուղիէն: Դաւիթ մի քիչ փոփոխուած իւր կատարելով բնագիրին վրայ, զայն վերածեց պատերազմական երգի (Սաղ. 68:1) և այսպէս ժողովուրդին ռազմաշուռն աղօթքը՝ ռազմերգը դարձաւ բանական:

Այս էր նաեւ պատերազմական երգը Ժէ. դարու սկովտիացի ուխտադիրներուն, որոնք հերոսաբար կռուեցան իրենց կրօնական ազատութեան համար՝ անգլիացի բռնապետներուն դէմ, ներկելով իրենց արիւնովը դաշտերն ու սարերը, և կռուելով կ'երգէին, «Թող ելլէ Աստուած և անոր թշնամիները թող ցրուին»:

Բրոմուէլ, այդ պողպատեայ հրամանատարը մաքրակրօններուն, որ

մորիկանման կը տանէր իր բռնակը յաղթանակէ յաղթանակ, և որուն ի տես թշնամի բռնակները կը հալէին, թագաւորները ահ ու դողի կը մատնուէին, իր զօրքին գլուխը անցած կ'երգէր, «Թող ելլէ Աստուած և թշնամիները ցրուին»:

Այս աղօթքը կամ երգը, սակայն, ժանգոտած սուրի նման այժմ իր պատեանին մէջն է և կախուած կը մնայ պատէն և այլեւս չգործածուիր: Արդեօք այսօր Աստուծոյ զաւակները թըշնամի չունին, կամ թէ հաշտուած են թշնամույն հետ, զինադադար կնքեր են մինչեւ իսկ դաշնակցե՞ր են՝ որ պատերազմական ազազակ չլսուիր իրենց շարքերուն մէջ: Ո՛հ, այո՛, այս աղօթքը կամ երգը, իսպառնութեան համար չէ, այլ պատերազմի համար: Ո՛ւր որ թշնամի չկայ, չկայ նաեւ հոն պատերազմ, հեռեւաբար պէտք ու չկայ «Ելիր ով Տէր» ըսելով, Տէրը անհանգիստ ընելու՝ տեղէն վերցնելով զայն: Այսօրուան քրիստոնեաները փոխանակ Բրիտոսի քաջ զինուորները ըլլալով,

և Մեծ Հրամանատարին հրամանին տակ յառաջանալու և գրոհ տալու թշնամույն, ոմանք դասալիք են, ոմանք տեղ-քայլ կ'ընեն, ոմանք լեզու գտեր են թշնամույն հետ, հետեւարար դադարած են կռուելէ Գրիստոսի կողքին: Անոնք այլեւս չեն երգեր «Յառաջ Քրիստոսազօր» երգը, կամ չեն աղօթեր, «Ելիր, ով Տէր ու քու թշնամիներդ ցրուին, ու քեզ ատողները փախչին» աղօթքը: Բայց պատերազմը տակաւին կը շարունակուի կատաղիօրէն: Չարին և անոր բանակներուն ղէմ, առերերու բախման ձայները կը լսուին, պատերազմի դաշտին վրայ, Գրիստոսի փրոյն մեռնողներ կան՝ յաւիտեանս ապրելու համար: Սոյն ռազմերգը երգելով մեծ ճակատամարտներ մղող քաջարի զինուորայինք ունի Գրիստոսայժմ, ինչպէս անցեալի մէջ: Գէթէոն իր երեք հարիւր հաւատարիմներով չարաշար պարտութեան մատնեց Մադեանացիները որոնք անբողբոսեալ թիւով ու ուժով՝ եւ երբ բռնու մարդիկ կը կռուէին գերազանց թիւով թշնամույն ղէմ կ'աղաղակէին, «Տէրոջ ու Գէթէոնի առջ»։ Պողոս, այդ անգուգական պատերազմիկը՝ Գրիստոսի, միշտ կրակի գիծին վրայ էր խաւար ուժերուն ղէմ՝ իր պայքարին մէջ: Անկէ ի վեր սոյն կրակի գիծին վրայ ինկողներ մեծ թիւ մը կը կազմեն, բայց հեազհետէ կարծես ինկողներուն տեղը լեցնող նորագիրներ կը պակսին: Այսօր թշնամին ամէն մարդի վրայ իր բոլոր ուժերը շարժման մէջ դրած է, և ժրաջան աշխատանքի է մղուած, մի գուցէ գիտնալով որ իր օրերը վերջանալու վրայ են, և շատ կարճ ժամանակ մը ունի միայն իր աւերիչ գործը կատարելու: Ստատման մարդիկը կը մղէ բացէ ի բաց գիրք բռնելու Աստուծոյ և իր Օծեալին ղէմ, և այդ դիրքը յաճախ

ամբարտաւան է: Առանց քաշուելու և սարսափելու Գրիստոսի և Աւետարանի հասցէին նախատալից խօսքեր կ'ուղղեն: Անշուշտ, երբեմն Տէրը արագ դատաստան կը կատարէ այնպիսի յանդուգն ամբարիշտներուն ղէմ: Անգամ մը մարդուն մէկը երբ կը պարծենար զԱստուած հաշուի բերած ըլլալուն համար—որովհետեւ անվախօրէն կը գործէր կիրակիները— խօսքը դեռ բերանը, շանթահար կ'իյնայ, իսկ ընկերը որ քովէ էր այն տան և որ միասին կ'աշխատէին, ցմահ ցաւազար կը դառնայ:

Տարիներ առաջ Բիճպուրկի մէջ, Սմերիկա, բանտի մը մէջ երկու մարդիկ իրարու հետ կը խօսէին Սբ. Գրքի և Գրիստոսեութեան վրայ: Անոնց մէ մէկը, Թօմաքն անունով, Յիսուսին կուտայ գէշ և անարգալից ծաղրանուն մը: Սոսքը դեռ չաւարտած գետին կ'իյնայ, լեզուն բռնուած աչքերը կոպերէն դուրս ցցուած, և մահը վայրկեանական կ'ըլլայ: Անգամ մը կեղծմտչկի համաճարակ մը կար: Տեղւոյն բժիշկը զարմանալի յաջողութեամբ կը բժշկէր վարակեալները: Այնքան ինքնավստահ դարձաւ որ, սկսաւ պարծենալ թէ չկայ կեղծմտչկի տեսակ մը որ զայն չկարենայ դարմանել, և ասպարէզ կարգաց Աստուծոյ որպէսզի զրկէր զայն: Տէրը կ'ընդունի հրաւերը և կը զրկէ կեղծմտչկի այնպիսի հիւանդութիւն մը որմէ կը բռնուի իր կրտսեր զաւակը և կը մեռնի, և իրարու ետեւէն կը բռնուին ու կը մեռնին ութը զաւակներն ալ: Ինչ ամբարտաւանութիւնս երբ Տէրը ելլէ թշնամիները պիտի ցրուին իր առջեւէն, ո՞վ կրնայ կենալ Անոր առջեւ: Ո՞վ կրնայ պատերազմիլ Աստուծոյ հետ, մենք Անկէ զօրաւոր ենք: Սակայն Տէրը միշտ այդպէս արագ դատաստան չընէր, Ան երկայնամիտ

է և բազում ուրիշ, Այսօր չէ թէ միայն անհատներ, այլ ազգեր ու ժողովուրդներ Աստուծոյ դէմ կը բռնեն միեւնոյն յիմար դիրքը: Պատկեր մը կայ ու՞ր կը տեսնուի սանդուղի մը ծայրը մինչեւ երկինք հասած: Համայնապար մը մուրճը ձեռքը վեր կը մագլցի Տէրը գտնէն վար առնելու: Եթէ կարելի ըլլար պիտի ընէին մարդիկ ան ալ:

Կայ նաեւ տհալի տնկում կեանքերու մէջ: Բարձր ապականոծ, բարոյականը խաթարած է ամէն տեղ: Սողոմ-Գոմորացիք պահ մը եթէ գլուխին հանէին գերեզմաններէն և տեսնէին այժմու անբարոյականութիւնը ազգերու և անհատներու մէջ, իրենց ամօթէն պիտի կարմրէին: Այսպէս մարդիկ ամէն կողմէ չարին ազդեցութեան տակ անխնայ պայքար կը մղեն, Աստուծոյ դէմ, Իր Որդւոյն դէմ, Իր ժողովուրդին և Խօսքին դէմ, և ամէն ինչ որ ուղիղ է և արդար: Պէտք է որ շարունակէ իրերու այս վիճակը այսպէս, և Տէրը կենայ հանդարտ կարծես թէ անկարող է բան

մը ընելու: Ոչ, անշուշտ. մեզի կը մնայ ազադակել ու ըսել, «Տէրը թող ելլէ, ու անոր թշնամիները թող ցրուին»:

Ոհ, ինչ դիւրութեամբ կրնայ ընել այս բանը: Միայն քիչ մը տեղէն շարժի, ահա բաւական է երկրի և դժոխքի ուժերը սարսափահար փախուստի մատնելու: Եւ Ան պիտի ընէ, Տէր Յիսուս վերէն փառքով և զօրութեամբ պիտի յայտնուի, բոլոր թշնամիներէն վրէժ առնելու: Ան պիտի ըսէ.— «Այլեւս բաւական է, թշնամին շատ երկար ըրաւ, հերիք է անոր ինծի ասպարէզ կարգալը, իմ համբերութիւնս տկարութիւն սեպուեցաւ, այլեւս ելլիմ: Անոնց անիրաւութեան գաւաթը լեցուեցաւ: Շնորհաց ժամանակը վերջ պէտք է գտնէ, համբերութեան շրջանը պէտք է վերջակէսը ունենայ, և յարգարին հաւատքը այլեւս փորձի չենթարկուի»: «Թող ելլէ Աստուծոյ, անոր թշնամիները թող ցրուին, և զանիկա ատողները իր երեսէն թող փախչին» Խ. Թ. Ս.

ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑԱԻ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ

Կը կարծուի թէ՛

Մատթէոս.— Սրով սպաննուեցաւ Եթովպիոյ մէջ:

Մարկոս.— Ազեքսանդրիոյ փողոցներուն մէջ քաշկռտուեցաւ, մինչեւ որ մեռաւ:

Ղուկաս.— Յունաստանի մէջ ձիթենիէ մը կախուեցաւ:

Յովհաննէս.— Եռացող կաթնայի մը մէջ դրուեցաւ, անկէ տապեցաւ և Եփեսոսի մէջ քնական մահով մեռաւ:

Մեծն Յակոբոս.— Գլխատուեցաւ Երուսաղէմի մէջ:

Կրտսեր » Երուսաղէմի տաճարէն վար նետուելէ ետքը բերու տակ սպաննուեցաւ:

Փիլիպպոս.— Հերոսոլոսոյ մէջ սիւնէ մը կախուեցաւ:

Բարթողիմէոս.— Խորազանով հարուածուեցաւ:

Անդրէաս.— Խաչի մը կապուած քարոզեց՝ մինչեւ հոգին փչեց:

Յուդա.— Նետով զարնուած՝ մեռաւ:

Սիմոն Նախարարայր.— Պարսկաստանի մէջ խաչուեցաւ:

Մատթիոս.— Նախ քարկոծուեցաւ և յետոյ գլխատուեցաւ:

Պետրոս.— Գլխիվայր խաչուեցաւ:

ԱՐԹՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳԵՂԵՆԻ ՄԷՋ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Գեհենը մեծ եռուզերի մէջ էր : Բազում չար ոգիներու սկսուածներ բերած էին վերջին լուրերը աշխարհէն : Այս լուրերէն ոմանք Բէեղզեբուղի համար նպաստուոր, իսկ ոմանք ալ ոչ-քաջալերական էին : Երբ նպաստուոր լուր մը տրուէր, Բէեղզեբուղուղի կը նստէր, իր դէմքը հանդարտութիւն կ'ստանար, և ուրախութեան ճիչերը կը հասնէին դժոխքի հեռուոր վայրերը : Զոր օրինակ՝ եթէ չար ոգի մը ըսաւ թէ ն... քսնուող եկեղեցին որոշեց որ այս տարի արթնութեան համար որ'եւէ ճիգ տեղի չունենայ, որովհետեւ բաւական սուղի կը նստի, երկարատեւ ուրախութեան աղաղակ և ծափահարութիւն կար : Երբ ուրիշ չար ոգի մը տեղեկագրեց թէ Ի... քսնուող Եկեղեցւոյն պաշտօնեան, արթնութեան գաղափարին վրայ պաղջուր մը թափեց, ուրախութեան աւելի մեծ արտայայտութիւն մը եղաւ : Սակայն, երբ սկսուաւ մը ըսաւ թէ Գ... Գ... Ա... քաղաքներուն մէջ կարգ մը հաւատացեալներ արթնութեան համար մեծ ջանք ի գործ կը դնեն, և մասնաւոր աղօթաժողովներ կը սարքեն, Բէեղզեբուղի իր յօնքերը պոստեց, սկսաները կրճատեց, և չար ոգիներ գետինը կը զարնէին իրենց ոտքերը, օգին մէջ կը ճօճէին իրենց գեղարդները, առնելով ահաւոր երեւոյթ մը :

— «Ով Գեհենի ոգիներ, ըսաւ Բէեղզեբուղի, ես նոր գաղափար մը ունիմ, ո՛հ, անիկա մեզի համար նոր չէ, սակայն անոր կը հագուեցնենք նոր տարազ մը, քիչ մը կերպարանք փոխելու, և կը խաբենք միամիտները : Կը տեսնեմ որ արթնութեան այս հոգին պիտի չկրնանք արգելել : Աւսող,

անիկա հետզհետէ կը աստիանայ : Տեսէ՛ք շատ մը տեղեր անիկա շատերուն նիւթ դարձած է, և էմմանուէլի պաշտօնեաներ ո՛րեւէ ժամանակէ աւելի անով զբաղուած են այսօր : Ո՛հ, այս գործունէութիւնը ցաւ կը պատճառէ ինծի : Սակայն կրնանք արգելել» :

«Կեղծ-կրակ ոգի, յառաջ եկուր», ըսաւ Բէեղզեբուղի, և ան դէպի առաջ եկաւ : Անիկա չար ոգի մըն էր որ իր շուրջը ունէր կակուղ շոգիանման լոյս մը, նիւթ մը որ քիչ մը կը փայլէր, սակայն երբ մօտէն քննուէր, ոչ մէկ տաքութիւն ցոյց կուտար, կամ իրական լոյս մը :

Վայրի-կրակ ոգի, հոս եկուր», կանչեց Բէեղզեբուղի, և ան եկաւ : Իր բոլորտիքէն կրակ մը կ'եռար, ամենէն չափնկալուած տեղերու և ձեւերու մէջ : Յետոյ կանչուեցաւ ուրիշ ոգի մը որ կը կոչուէր Յուզում :

— «Ձեզի, երեք ոգիներուդ գործ մը վատահուած է, ըսաւ Բէեղզեբուղի : Արթնութիւն մը զալու վրայ է, ստիկա իրողութիւն մըն է : Կ'ուզեմ որ դուք երեքնիդ ընէք ձեր լաւագոյնը վրիպեցնելու համար իրական արթնութիւն մը : Կրակ մը կեղծել տուէք, կամ վայրի կրակ մը թափեցէք, որքան յուզում, պոռալ կանչել ըլլայ այնքան գործը պիտի շեղի իր նպատակէն : Կրնայ ըլլալ որ քանի մը հոգիներ դարձի գան, սակայն կեղծ մեթոտներով շահուած հոգիներ էմմանուէլի համար օգուտ չունին, անոնք իմ պիտի ըլլան ետքէն :

«Ինչ որ մահացու վախ մը կը պատճառէ ինծի, Գեհենը մի՛ արտայայտեմ, ան ալ իրական և ճշմարիտ, լոյսա-

տարած արթնութիւն մըն է, որ մեզմէ ամէն ատեն հոգիներ կը խլէ: Ո՛հ, կը սարսափիմ անկէ, և նշաններ կան յայտնող թէ, ճիշդ ան է որ կուգայ: Մենք պէտք է սպաննենք այս ճշմարիտ եռանդը և հոգեւոր ջանքը, որ հոգիներու համար ծարու կը կոչուի: Մենք ջանալու ենք պէտք եղածին չափ արթնութեան առժամայ բնոյթ տալ, եթէ յաջողինք այդ բանին մէջ՝ յաղթանակը մերն է:

«Դուք ոգիներ Վիսուքիւն և Անսարբերութիւն, հոս եկէք», ըսու Քէեղզեբուլ: Եւ անոնք եկան, սոյն երկու շար ոգիներ շատ վատահիւի ոգիներ էին, և էմմանուէլի բանակին մէջ աւերում և նախճիր պատճառած են:

«Դուք վերջապէս ամենէն գլխաւոր օգնականներս էք ըսաւ Բէեղզեբուլ: Փոքր ոգիներ Կեղծ-կրակ, և Վայրի-կրակ և Յուզում կրնան պատիկ գործեր կատարել, այո, կրնան մեծ գործեր ընել, սակայն դուք պէտք է աջակցիք անոնց: Մի՛ քաջալերէք արթնութիւնները, ըսէք մարդոց թէ ո՛րքան սուղի կը նստի, և ի՛նչ ծանր բեռ մը պիտի պատճառէ: Թէլադրեցէ՛ք ամէն սուտ որ արթնութեան եռանդը կրնայ մարել: Դործադրեցէք սուտն ու ճշմարտութիւնը փոխի փոխ, տեղին համեմատ ամէն գնով խորհիւ և արթնութիւնը արգիլելու համար:

«Ես մեծ արթնութեան մը նշանները կը տեսնեմ, որ կը տաքնապեցընէ զիս: Եւ իրական արթնութիւն մը: Ո՛վ իմ ոգիներս, արգիլենք զայն: Ո՛հ, իմ թագաւորութիւնս, իմ աթոռս: Կը թուի թէ էմմանուէլը հզօր կերպով կը շարժի իր ժողովուրդին

մէջ: Պաշտօնեաներ այնպէս մը կ'զգան այդ արթնութեան գալը, որ սակէ առաջ երբեք չէին զգար: Աղօթող խումբեր կազմուած են, ո՛հ որքան կ'ատեն զանոնք: Անոնք կը շարունակեն կոր: Արթնութեանց վրայ քարոզներ կը տրուին, արթնութեան Հոգին տեղէ տեղէ կը շարժի: այդպէս կը տեղեկագրեն իմ սկսուածներս, և ես կը հաւատամ, որովհետեւ կ'զգամ կոր շայն: Ի՞նչ պէտք է ընել»:

Եւ Բէեղզեբուլ խոսու նայուածք մը ուղղեց իր սկսուածներուն, և դաժան նայուածք մը ուղղեց իր ամենէն նշանաւոր և հաւատարիմ ոգիներուն վրայ, և պատիկ վայրի-կրակ և միւս ոգիներուն վրայ այնպիսի անախորժ նայուածք մը նետեց որ անոնք տեղերին կձկուած մնացին իրենց սարսափէն:

«Կը վախնամ թէ այս արթնութեան հոգին մենք պիտի չկրնանք արգիլել, շարունակեց Բէեղզեբուլ, սակայն կրնանք մեր լաւագոյնը ընել կեցնելու համար զայն: Պիտի նետենք ամէն տեսակ արգելքներ իրական և երեւակայական: Պիտի աշխատինք վիժեցնել զայն ստեղծելով ժամանակուոր խրտում մը, և պիտի ընենք ամէն ինչ կեցնելու համար Հոգւոյն Սրբոյ պատճառած, և էմմանուէլին կողմէ եկած ճշմարիտ արթնութիւնը: Եթէ յաջողինք, կը շահինք: Մեծ վախ ունիմ թէ պիտի կորսնցընենք»:

Եւ Բէեղզեբուլ ելաւ իր աթոռէն, գնաց խորհրդակցելու Գեհենի որջին: մէջ գտնուող իր յոռեգոյն ոգիներուն հետ:

Հետեւողութեամբ Խ. Թ. Ս.

Աստուած կրնայ զարնել ժայռերուն և բանալ ծովեր, կրնայ բանալ օգին գտնձերը, երկրին ընդիրքէն կրնայ երեւան հանել շտեմարան: Թուռնները պիտի բերեն միս, ձուկ, դրամ եթէ Ան այդպէս հրամայէ: Ան կը վերցնէ կղզիները որպէս շնչին բաներ, ուրիշ քրքան աւելի գիւրութեամբ կրնայ տանիլ քու ամենածանր բեռդ:

Յ. Պ. ՄԱՅԸՐ

ԻՍ ՕՄԵԱԼԻՍ ՄԻ ԴՊԻՔ

Սարկաւազ Լի որ ազնուաբարոյ,
լռիկ, հաւատարիմ, շնորհալի մարդ
մըն էր, որ մը այցելութիւնը ընդու-
նեց, անհանդարտ, սնտփառոյ և ոչ-
խորհիկ մարդու մը, որ եկեղեցւոյն
անդամն էր, և որ կ'աշխատէր եկեղե-
ցիին մէջ խռովութիւն ստեղծելու,
մանաւանդ քարոզիչը դուրս հանելու:

Սարկաւազը գնաց դիմաւորելու
իր այցելուն, որ սովորական բարե-
ւէն ետքը, կ'սկսի ողբալ եկեղեցիին
տխուր վիճակին վրայ, և կը հարցնէ
թէ՝ «երեք տարիէ ի վեր ինչո՞ւ արթ-
նութիւն մը տեղի չունենար: Ի՞նչ կը
խորհիք թէ ըլլայ պատճառը իրերու
այս կացութեան, գիտէ՞ք թէ ի՞նչ է,
պնդեց իր հարցումին վրայ»:

Սարկաւազը գաղափար մը տա-
լու պատրաստ չէր, և քիչ մը խոր-
հեղէն ետքը, անկեղծօրէն պատասխա-
նեց. — «Ո՛չ, չեմ գիտեր»:

— Կը կարծէ՞ք որ եկեղեցին իր
առջեւ դրուած գործին գիտակցու-
թիւնը ունի:

— Ո՛չ, չեմ կարծեր:

— Կը կարծէ՞ք որ պաշտօնեան
լիւռլի կ'ըմբռնէ իր գործին հանդիսա-
ւորութիւնը:

— Ո՛չ, չեմ կարծեր:

Այս խռովարարին աչքերը սկսան
փայլիլ, և աւելի համարձակութիւն
ստացած շարունակեց հարցնել,

— Կը կարծէ՞ք որ, «Անոնց աչքերը
բռնուած էին» նիւթին վրայ իր տուած
քարոզին մէջ արտակարգ բան մը կար:

— Ոչ, չեմ կարծեր:

Սարկաւազին այս միավանկ և
կարճ պատասխաններէն մեծապէս քա-
ջալերուած հարցուց.

— Ուրեմն չէ՞ք կարծեր որ լա-
ւագոյն է այս մարդուն ճամբայ տալ
և ուրիշ մը հրաւիրել:

Ծերունի սարկաւազը սթափեցաւ,
կարծես հարուած մը ստացած, և սո-
վորականէն բարձր ձայնով մը աղաղա-
կեց. — Ոչ, չեմ կարծեր:

— Ինչպէ՞ս, ըսաւ այցելուն զարմո-
ցած, մինչեւ հոս տմէն ըսածներուս հա-
մամիտ եղար, այնպէս չէ՞. — Ոչ, չեմ
կարծեր:

«Պարոն, այնքան քիչ կը խօսիք
որ, ոչ ոք կրնայ հասկնալ թէ ի՞նչ ը-
սել կ'ուզէք, ըսաւ վրդովուած»:

«Ժամանակին շատ խօսած եմ, պա-
տասխանեց ծերունին ոտքի ելլելով:
Երեսուն տարի առաջ, սիրտս նուա-
սացում մը ունեցաւ, անկէ ի վեր Տէ-
րովը առջեւ կամաց կը քալեմ: Այն
ատեն ես յաւիտենականութեան պէս
հանդիսաւոր ուխտ մը ըրի, և դուն
մի աշխատիր ինծի դրժել տալու զայն»:

Խռովարար մարդը ցնցում մը ու-
նեցաւ, մինչեւ հիմա լուռ և հանդարտ
մարդուն եռանդին ի տես, և հարցուց
թէ ի՞նչ պատահեցաւ երեսուն տարի
առաջ:

«Լաւ, պարոն, պիտի պատմեմ
քեզի: Ես քեզի պէս կը դաւադրէի
արմատախիլ ընելու Աստուծոյ շառա-
ներէն մէկը, զոր Ան տնկած էր իր
դաշտին մէջ: Իմ կուրուքեանս մէջ
չնչին բուն կը կարծէի «աստղեր»էն
մէկը դուրս չպրտել, զոր Յիսուս իր
աջ ձեռքին մէջ կը բռնէր: Ես և զիս
հրապուրողներ — որովհետեւ կ'ըն-
դունիմ թէ ես կը տարուէի ու խաբ-
ուած էի — զիրար կը շնորհաւորէինք
թէ խղճամիտ ենք, և թէ Աստուծոյ
ծառայութիւն կ'ընէինք վտարելով
այդ սուրբ մարդը իր բեմէն և գոր-
ծէն, և կ'ըսէինք թէ անոր գործը Պ—
քաղաքին մէջ, ուր ես ալ կը բնակէի,
աւարտած է այլեւս: Մենք կը հառա-
չէինք որովհետեւ արթնութիւն չկար

մինչ մենք կը բամբասէինք, կը խըծ-
բըծէինք, և կը հարուածէինք, փո-
խանակ վեր վերցնելու մեր աղօթք-
ներովն ու ջանքերովը այն գովծիքը
որուն ձեռքէն կոպտօրէն օրհնութիւն
կ'սպասէինք, և ապա, պարոն ան փրկու-
թեան կառքը չէր կրնար քաշել երբ
մեզմէ վեցեակ մը հոգիներ զինքը կը
կշտամբէինք իբր տկար մէկը, մինչ
մենք կախուած էինք անիւններէն որ-
պէս կոպտօրէն ծանրութիւններու
կնքէինք թէ ան Հոգւոյն Սրբոյ զօ-
րութենէ զուրկ է, և այսպէս հալա-
ծեցինք զինքը վիրաւոր եղնիկի նման,
մինչեւ որ հիւծած և արիւնոտած փա-
խաւ ծածուկ անկիւն մը՝ հոն մեռնե-
լու:

Հաղիւ թէ ան գացած էր Աստ-
ուած եկաւ մեր մէջը, ցոյց տալու
մեզի թէ Ան օրհնած էր իր պատուա-
կան ծառային ջանքերը: Մեր ամենուս
սիրտը կոտրեցաւ, և մեր կարծրա-
սիրտ զաւակները դարձի եկան: Ես
որոշեցի յարմար ատենին այցելել
նախկին հովիւս և խոստովանիլ իմ
մեղքս, և շնորհակալութիւն յայտնել
իմ խստապարան զաւակներուս հան-
դէպ իր յայտնած հաւատարմութեան
համար, որոնք շատոնց հողին տակ
ծածկուած սերմերուն նման ծիլ տուեր
էին: Աստուած ուրացաւ ինծի այդ
մխիթարութիւնը, որպէսզի սուրբե-
ցընէ ինծի այնպիսի դաս մը զոր ա-
մալէն հաւատացեալ պէտք է սորվի,
թէ ով որ Իր ծառաներէն մեկուն դպի,
Իր աշխտուն բիբի կը դպի:

Լսեցի որ հովիւս հիւանդ է, երէց
զաւակս ինծի հետ առնելով 25 մզոն
տեղ մը դացի զինքը տեսնելու: Իրի-
կուն էր երբ հասայ, և իր կինը վար-
ուեցաւ ինծի հետ, այնպէս ինչպէս որ-
եւէ կին պէտք էր վարուեր իր ա-
մուսնոյն այնքան վնասող մէկու մը
հետ, և մերթեց զիս իր սենեակը տա-

նիլ՝ ըսելով, «Ան մահամերձ է, քո-
ներկայութիւնդ կրնայ աւելցնել իր
տառապանքը»: Իր բառերը սուր նե-
տերու պէս էին իմ սրտիս Ըսի իւրո-
վի, խնդիրը արդէն մինչեւ այդտեղ
հասած է: Այն մարդը որուն ջանքե-
րով Քրիստոս զիս իր փարախը առաջ-
նորդեց, ան որ զիս մխիթարած է երբ
տունս մահով այցելուած էր և ես ան-
մխիթար էի, ան որ մինչեւ դաւա-
դիրներ զիս իրմէ հեռացուցին, ին-
ծի եղբայր մը եղած էր, իսկ այժմ
զիս տեսնելն անգամ պիտի զրկէր զին-
քը խաղաղ մեռնելէ... Աստուած թող
ողորմի ինծի, տղադակեցի, ես ինչ
ըրի այդպէս: Ես խոստովանեցայ մեղքս
այդ հեղաճամբոյր կնկան առջեւ, և
պաղատեցի իրեն որ Քրիստոսի սիրոյն
ինծի թոյլ տայ իր մեռնող ծառային
առջեւ ծնրադրելու և իրմէ ներում
ստանալու: Ո՛հ, մեծ ուրախութեամբ
կ'ուզէի տանիլ ամբողջ ընտանիքը իմ
տունս, յաւիտեանս ունենալու զանոնք
ինծի հետ: Սակայն այդպիսի երջան-
կութիւն մը զլացուած էր ինձմէ:

Երբ սենեակէն ներս մտայ, օրհ-
նեալ պատերազմիկին քովը, որուն
վրայէն կ'իյնային զէնքերը, բացաւ
իր նուաղուն աչքերը և ըսաւ. «Եղ-
բայր Լի, եղայր Լի»: Ես վրան ձեռ-
ով լացի ըսելով, «Իմ հովիւս, իմ
հովիւս»:

Յետոյ վերցնելով իր ճերմակ և
նիհար ձեռքը հծծեց իւրօրունկ և տպա-
ւորիչ ձայնով մը, «Իմ օծեալիս մի՛
դպիք, և իմ մարդարէներուս չարու-
թիւն, մի՛ ընէք», ես փափկօրէն խօ-
սելով ըսի իրեն թէ ես եկած եմ խոս-
տովանելու իմ մեղքս, և բերած եմ
իր պտուղներէն, և կանչեցի իմ զա-
ւակս որ պատմէ իրեն թէ ինչպէս
Քրիստոսը գտած է: Սակայն ան անգի-
տակից էր շուրջը դարձածէն, իմ երե-
սիս տեսքը աշխարհի վրայ վերջին

տառապանքը բերած էր իր տառապանակ հոգւոյն:

Համբուրեցի ճակատը և ըսի թէ որքան սիրելի եղած էր ինքը ինծի համար: Յայտնեցի իրեն իմ անհաւատարմութեան համար ներում ստանալու բռնն փափաքս, և խոստացայ հոգալ իր այրին և որք զաւակները: Սակայն իբր միակ պատասխանը—որպէս թէ ան կուգար վրդովիչ երազի մը մէջէն — մրմռաց՝ «Իմ օծեալիս մի՛ դպիք, և իմ մարգարէներուս չարութիւն մի՛ ընէք»:

Ամբողջ գիշերը անցուցի իր սընարին քովը, արշալոյսին իր աչքերը գոցեցի այս աշխարհի համար: Իր այրիին առաջարկեցի բնակելու համար տուն մը իր բոլոր մնացած կեանքին մէջ, սակայն նէ հերոսաբար ըսաւ, «Առաւօրէն կը ներեմ քեզի, սակայն, իմ զաւակներս, որոնք խորապէս մասնակից եղան իր վշտին, երբեք պիտի չտեսնեն զիս իր յիշատակին հանդէպ անփոյթ, այդ վիշտը պատճառողներէն օգնութիւն մը ստանալով: Ան մեզ յանձնեց իր ուխտին Աստուծոյն, և Ան մեզ պիտի հոգայ»:

Էհ, պարոն, մեռնողին այդ խօսքերը կը հնչէին ականջներուս իր դադաղին և գերեզմանին ընդմէջէն: Երբ քնացայ երազիս մէջ տեսայ Քրիստոսը որ կը կայնէր իմ առջեւ ու կ'ըսէր «Մի՛ դպիք օծեալիս, և իմ մարգարէներուս չարութիւն մի՛ ընէք»: Այս խօսքերը ինծի հետեւեցան մինչեւ որ ըմբռնեցի թէ Քրիստոս մեծապէս ի պատուի կը բռնէր այնպիսի մարդիկը որոնք ամէն բանէ հրաժարած են իր սիրոյն համար, և ես ուխտած եմ զանոնք յորոժամ սիրել իր սիրոյն համար, մինչեւ իսկ եթէ անոնք կատարեալ չըլլան ալ: Այն օրէն ի վեր, պարոն, շատ քիչ խօսած

« ՆԵՐԷ ԻՆՑ, ՅԻՍՈՒՍ »

Խիղճըս անգաղար խրթանե հոգիս, Ամբողջ աշխարհը ոչինչ է հե՛իս. Պատուհասն է աւ անբիւ մեղքերուս. Խնդրեմ արցունքով, Երեք ինձ ՅԻՍՈՒՍ:

Գիտեմ, չի ճանչցայ բու խաչիդ սերը, Ու յագեցուցի մարմնոյս «ԵՍ»երը, Ապրեցայ հեռու քու առ ու անլոյս, Անիծեցի քեզ, Երեք ինձ ՅԻՍՈՒՍ:

Մասնեցի ըզքեզ, զերդ դաժան Յուդայ, Խաչի դառն մահուան ու ես խայք գայ եւ այսպէս կայծեր իմ անմահ հոգւոյս 'Իզեցի ես ինքս, Երեք ինձ, ՅԻՍՈՒՍ:

Մեղաւոր հոգիս խաչիդ է փառած, Աշխարհի վտէճն հալած ու այրած. Ակնարկ մը Երեք իմ կոյր աչքերուս,

եմ, սակայն օգնած եմ իմ հովիւիս, եթէ մինչեւ իսկ ան չըլլայ արտակարգ կարողութեան տէր մէկը: «Թող իմ լիզուս իմ քիմքիս փակի և իմ աջ ձեռքս իր պաշտօնը մոռնայ եթէ համարձակ իմ բաժնի զայն որ Աստուծոյ միաւորեց: Երբ տեղ մը Աստուծոյ պաշտօնեային գործը աւարտած է, կը հաւատամ թէ Աստուծոյ մատնանիլ պիտի ընէ զայն անոր: Պարոն, քեզի չեմ կրնար մասնակցիլ այդ տրխուր գործիդ մէջ: Բաց աստի, եթէ քու բերնէդ այդ մասին ուրիշ խօսք մը լսեմ, պիտի խնդրեմ եղբայրներէն որ քեզի հետ վարուին որպէս երկպառակիչ: Կանգ առ ու՛ր որ ես, և ազօթէ Աստուծոյ, ըլլայ որ սրտիդ խորհուրդը քեզի ներուի»:

Երբեմն պզտիկ «ոչ» բառին մէջ մեծ ոյժ կայ, սակայն, երբեմն նուազ քաջութիւն պէտք չէ ասիկա հաստատապէս ըսելու ինչպէս որ ըրաւ այս լուռ և բարի սարկուսագը:

Թարգմ. Խ. Թ. Ա.

ԴՈՒՆ ՈՐԸ ԸՆՏՐԱԾ ԵՍ

Մարդուն մէջ սեփականութեան փոփաքը կայ, գրեթէ բնածին, որովհետեւ այս յատկութիւնը ի յայտ կուգայ մարդուն մէջ, չատ կանուխէն, երբ մանուկ է ան: Մանուկներ ունենալ կ'ուզեն, և իրենց ունեցածը պահելու զօրաւոր ձգտում ունին, և կը մերժեն ունեցածին հասակակիցներուն հետ բաժնել: Մարդ ոչ թէ միայն ունենալ կ'ուզէ, այլ ունեցածին վրայ գուրգուրանք մըն ալ ունի, որովհետեւ անիկա իր հարստութիւնը կը կազմէ, և այդ հարստութիւնը՝ իր ուրախութիւնը, նաեւ իր տառապանքը:

«Մարիամ կեանք մը ստացաւ թաղաւորէն, յոյս մը իր ժողովուրդէն ազատութեան համար, կը սեղմէ զայն իր կուրծքին, իր մանչուկը, իր հարստութիւնը... իր վիշտը»:

Աշխարհի հարուստները, ունին վայելքը իրենց ունեւորութեան, և տառապանքը վայելքին հետ միասին: Նոյնպէս Քրիստոսով հարուստներ երջանիկ են, նաեւ Անոր համար չարչարողոյ: Այս կը թուի ըլլալ ընդհանուր օրէնքը:

Աստուած սիրեց այս աշխարհը, որ իր սեփականութիւնն էր, տառապեցաւ նաեւ այս աշխարհի համար, սիրած ըլլալուն համար զայն: Յիսուս մեզ սիրելուն համար, «վշտերու տէր և ցուերու տեղեակ եղաւ» որովհե-

տեւ, մենք փրկուած մեղաւորնեւ կը կազմենք իր գոնձը:

Վարդան Մամիկոնեան իր հայրենիքին համար զոհուեցաւ, որովհետեւ սիրեց զայն, իրենն էր անիկա:

Մայրերու համար իրենց հարստութիւնն է իրենց սիրասուն զաւակները, և որոնց համար կ'ենթարկուին անլուր տառապանքներու և զրկումներու, և երբ պէտք եղած է՝ զոհուելու յօժարած են անոնց համար ալ, երբ խնդրոյ աւարկայ է անոնց կեանքը:

Ալիսո՛ս, Յուդան ալ, այդ Մամոնայի խնկարկուն, սիրեց արծաթը և Դեմաս այս աշխարհը, և զոհ գացին իրենց սիրած բաներուն համար զրկելով ինքզինքնուն յաւիտենական հարստութենէ:

Պօղոս ունեցաւ իր սիրածը, ան սիրեց յաւիտենական հարստութիւնը որուն համար ծեծերու, խոշտանգումներու և բանտի տառապանքներուն ենթարկուեցաւ, ու ետքէն գլխատումի:

Արդ, կը թուի թէ, մեր անցաւոր կամ մնայուն հարստութիւնը կը կազմեն նաեւ մեր վիշտերը: Հարկ է գիտնալ թէ ո՞ր տեսակի հարստութիւնն է մեր ունեցածը: Իբր իմաստուններ ինչո՞ւ չենք ընտրելու երկնային հարստութիւնը, Քրիստոսի փրկութիւնով, իր առժամակայ նեղութիւններով և սակայն յաւիտենական տառապանքներով:

«Այսօր ձեզի ընտրեցէք» կ'ըսէ մարգարէն: Ընտրէ քեզի համար երկնային հարստութիւնը, եթէ ոչ աշխարհը պիտի ըլլայ քու բաժինդ որուն կը հետեւի մշտնջենական կորուստ:

ԱԼՊԷՌԹ Յ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Կ'աղերսեմ անդուլ, ցերե ինձ, ՅԻՍՈՒՍ:
Կեանքս բովանդակ դժոխմ մ'ե, աւա՛ղ,
Սև անուես այսպէս մի օր, ուս կամ վաղ,

Պիտ' իջնամ ի հող յաւիտեան անյոյս
Ու մընամ դարեւ, ո՞հ ցերե, ՅԻՍՈՒՍ:

Ս. Յ. Թ.

Աղեփաւնդիա

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՔԸ ԵՒ ՍՈՒՐԻ ԳԻՐՔԸ

Գիրքերու դարուն մէջ կը գըտնուինք: Քսաներիդ դարը, կարելի է կոչել գիրքերու դարը. որովհետեւ մամուլը անդադար գիրք կ'արտադրէ: Ներկայիս աշխարհիս գիրքերուն թիւը գրեթէ անաշուկի եզած է: Թէ քանակով թէ որակով բազմաթիւ հեղինակութիւններու տարուէ տարի լոյս ընծայուելուն ականջալուր կ'ըլլանք:

Գիրքի մը արժէքը հեղինակին անձնաւորութենէն կախեալ է: Ազնւեալ գոյն նկարագրի տէր անհատներ, համարադրկային բարօրութեան ոգիէն մղուած, կրնան լաւագոյն երկեր արտադրել: Հեղինակը իր գիրքին շնորհիւ ծանօթ կամ անծանօթ բազմաթիւ մարդոց հետ կը տեսնուի: Ընթերցողը գիրքին ոչ միայն բովանդակութեան վերահասու կ'ըլլայ, այլ նաեւ հեղինակին անհատականութեան, որմէ վեր արդէն չի կրնար բարձր ըլլալ երկը:

Պէյքըն կ'ըսէ «Գիրքերը շոգեհաւերու նման ժամանակի ովկիանոսին մէջէն նուաւրկելով, հեռաւոր վայրերէ հարուստ արտադրութիւններ կը բերեն մեզի»: Անվիճելի իրականութիւններ են թէ գիրքերը այլազան պարգեւներ կը բերեն մեզի, անոնք մեր առջեւ կը բանաւն կեանքի ընդարձակ ասպարէզը: Անոնք անցեալը ներկային և ներկան՝ ապագային կը շղթայեն, գեղեցկութիւններ կ'ըստեղծեն, ճշմարտութիւններ կը տարածեն և լոյսեր կը սփռեն...:

Գիրքի մը իրական արժէքը կեանքերու վրայ անոր ձգած ազնուացուցիչ ազդեցութեանը մէջ է: Գիրքեր կան որ սեղանի վրայ դրուած պղպեղի, թթուի և աղանդերի տեղ կը բռնեն, այսինքն անոնք չեն տար, բան մը չեն չիներ, միայն ջիղերուն կը դպչին,

գիրքեր ալ կան որ թոյներու պէս կ'ազդեն, մարդոց խորհուրդները, ըզգացումները կը ստորնացնեն, և մարդը վար կը քաշեն, անասունին մօտ կը տանին. գիրքեր ալ կան՝ որ կեանքերու կը դպչին ու անոնց մէջ կը ըստեղծեն խորհուրդ, սկզբունք, իտէալ, և մարդը վեր կը հանեն, կեանքը կը ճոխացնեն, կը լայնցնեն: Աս վերջին տեսակի գիրքերը անոնք են որոնց հեղինակները մեծ հոգիի, բարձր իտէալի տէր մարդիկ են: Վերջապէս գիրքերու մէջէն հեղինակներն են որ իրենց մտքովն ու հոգիովը կը դպչին մեզի, և կեանքը կը շինեն և կամ կը քանդեն: Կարգա՝ ան գիրքերը որոնք քեզի խորհուրդ կը ներշնչեն, տեսիլներդ կ'ընդլայնեն, նկարագրիդ կը խորունկացնեն, և հոգեկան թռիչքներ կուտան քեզի՝ դէպի վեր սաւառներու:

Կարգալու արժանի և օգտակար լաւագոյն գիրքերը կտրենալ ընտրելը և ապա ուսումնասիրելը գովելի առաքինութիւն մըն է:

Քիչ շատ կարգալ գիտցող որեւէ անհատին հասկցած լեզուով գիրքեր գտնել կարելի է. ընթերցասիրութեան պատեհութիւնը ընդհանուրին առջեւ բաց է. ու գիտենք թէ մշակոյթը հայրենիք չի ճանչնար:

Արդ՝ կրթիչ և ազնուացուցիչ գիրքերը ընտրելու համար գործածէ խիստ միջոցներ: Անձնական գիրքերուդ քանակէն աւելի որակին հոգ տար: Պէյքըն ըսած է՝ «Թէ գիրքեր կան որոնք միայն ճաշակելու համար են, ուրիշներ՝ կլլելու և քիչեր՝ մարսելու, այլ խօսքով, գիրքեր կան որոնք միմիայն թղթատուելու են, ուրիշներ թեթեւօրէն կարդացուելու և քիչեր լուրջ ուսումնասիրութեան ար-

ժանի՝ Քանի որ քիչ է ժամանակը, Կարգալու, ընտրե լուսագոյն գիրքը, ամսէ ամիս գնէ զայն որպէսզի թէ հայ հեղինակը քաջալիրես և թէ գըրադարանդ ճոխացնելով ընտանեօք օգտուիս:

Գիրքերու առատութեան մէջ կայ Գիրք մը՝ որ ունի եզական գիրք իբրեւ լուսագոյն և անսպառ աղբիւր հոգեւոր և բարոյական ոյժի: Մարդուն կեանքին երջանկութիւնը առաւելապէս անոր ընթերցումէն կախուած է: Ան 3500 տարիներէ ի վեր գործածուող հին մատենադարան մըն է և սակայն ոչ միայն չէ հինցած այլ նաեւ ամէն գոսակարգի և զարու համար թարմ և օգտաշատ պատգամներ ունի: Գիրքեր կան որոնք անգամ մը կարգացուելէ յետոյ մէկ կողմ կը նետուին և քանի մը տարի վերջ կը հինանան: այս մէկը որչափ որ կարգաս, աղօթքով ու երկիւղածութեամբ, ամէն օր նոր ոյժնոր սնունդ և նոր ճշմարտութիւն մը կը համակէ սիրտդ, և հոգիդ անհուն բերկրանքով կը հրճուի:

Աստուածաշունչը կրօնական փորձառութեան և կեանքի Գիրքն է, անոր մէջ արձանագրուած է Աստուածային գաղափարի և յայտնութեան յառաջդիմական և աստիճանական զարգացում մը որ իր կատարեալ լրումին հասած կը գտնենք Յիսուս Քրիստոսով: Վերջին վիճակագրութեան մը համեմատ Ս. Մատեանը թարգմանուած է, մասամբ կամ ամբողջովին, հազար տասներ ութը լեզուներու: Անոր թէ՛ լեզուն և թէ՛ պատգամը տիեզերական է, այլացեղ մարդոց պահանջին ու պէտքերուն կը յարմարի: Աստուածաշունչը աղքատին հարստութիւնը իսկ հարուստին անհրաժեշտութիւնն է, ագէտին

գիտութիւնն ու գիտունին լոյսը, երիտասարդին առաջնորդը և ծերունիին նեցուկն է, մարդոց համար հոգեւոր կեանքի անսպառ գունձ մըն է, ներշնչման մշտաբուդիս աղբիւր և կեանքին եզական առաջնորդ: Իմաստուն և երջանիկ ըլլալու համար զայն մտառութեամբ կարգալ պէտք է, ապահով ըլլալու համար՝ հաւատալ և կատարեալ ըլլալու համար անոր խօսքերը գործադրել՝ ապրիլ... Անոր ընթերցման գլխաւոր նպատակը, մեղաւորները փրկել, մարդոց մէջ ներդաշնակ ու Քրիստոսատիպ կեանք մը կերտել կարելի ընելով՝ Աստուծոյ Թագաւորութիւնը տարածել է: Յուսահատը զայն կարգալով կը քաջալերուի, սգաւորը՝ կը մխիթարուի, հոգեկան հիւլանդը՝ կը դարմանուի: մոլորեալը յաւիտենականութեան ճամբան, իսկ մեղաւորը փրկութիւն կը գտնէ: Աստուածաշունչը կարգալով Քրիստոսի անձնաւորութեան հետ անձամբ հաղորդակցութեան մտնելու շնորք պէտք է վայելենք, Յիսուսի հետ ժամանցներ ու տեսակցութիւններ ունենալ, այլակերպութեան լեռը բարձրանալ, Գեթսեմանիի ձորը աղօթել և հուսկ յետոյ Գողգոթայի բարձունքին վրայ պատարագելի, նոր տեսիլքներու և նորանոր աշխարհներու կ'առաջնորդէ մեզ:

Ո՛վ ընթերցասէր, կարգա՛, միշտ կարգայ լուսագոյն գիրքերը նախընտրելով, սակայն յրջօրէն ուսումնասիրէ գիրքերուն Գիրքը, Աստուածաշունչը, որպէսզի կատարեալ ըլլաս ազգիդ և մարդկութեան ծառայելու համար...

Արեգ

Կ. Ս. ՖԱՐԱՃԵԱՆ



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ԱՀԱԻՈՐ ԱՆ՝ ՈՒՄ ՄԸ ԴԵՊԻ ԽՈՐԽՈՐԱՏ

Ես կը յիշեմ հէք Իվանը: Երիտասարդ տղայ մըն էր ան, որ կիրաւ կի օր մը փոխանակ եկեղեցի երթալու, ընկերոջ հետ միասին սեպածեւ բարձր ժայռի մը վրայ բազէի ձագուկներ ուսալու գտած էր: Իր ընկերը Վինկէնթ, չափահաս մարդ մըն էր, որ կրօնական սրբութիւններու հանդէպ յարգանք չէր տածեր, այդպէս մեղքի մէջ ալ աւելի յառաջացած էր քան Իվանը:

